

# ԳՈՒԹԱՆԻ ՇՈՒՐՋԸ<sup>\*)</sup>

(Գիւղատեսեսի յիշատակարանից)

## III

Ութ օր էր անցել իմ Սարիխանլար (այսպէս էր կոչվում կալուածը) գալու օրից։ Այս ութ օրուայ ընթացքում ինձ ազողուց շրջել ողջ կալուածի սահմանները ամենայն մանրամասնութեամբ։ այս շրջումի ժամանակ ես միջոց էի ունենում համեմատելու և ճշտելու ներկայ կալուածը իր խոկական սահմաններով՝ իմ ձեռքում եղած պլանի ցոյց տուած սահմանների հետ։ տարբերութիւնը մնձ էր։ Այնտեղ, ուր պլանում ցոյց էր տուած անտառ, այժմ չատ նոսր մացաներ էին միայն մնացել, այնտեղ, ուր վարելահողեր էին նշանակուած, այժմ անտանելի ճահիճներ էին, տեղ-տեղ կալուածի ներկայ սահմանները փոքրացել, ներս էին մտել, տեղ-տեղ ընդարձակուել էին և սուր եռանկիւնով մտել ուրիշ հողերի մէջ։ այնտեղ, ուր պլանում բաց տարածութիւն էր միայն նշանակուած, այժմ տներ, բնակութիւն, ծառեր կային։ մի ժամանակ գործող և ոռոգող առուները բոլորովին ցամաքած և հողի մակերեւոյթին զրեթէ հաւասարուած էին, վարելահողերը առաջուայ համեմատութեամբ քչացել էին և դարձել արօտատեղիներ, որոնց վրայ ազատ արածում էին բազմաթիւ ոչխարներ, նորածին գառնուկներ Բայց ամենից զգալի կորուստ էր ունեցել անտառը, ամենախոչոր ծառերը անիմայ կոտորուած էին և, ինչպէս երեւում էր, այդ աւերումը կատարուել էր պարբերաբար վերջին 6—7 ամարիների ընթացքում։ Մենք ինքներս անտառի մէջ բռնեցինք 5—6 սայլեր նոր կոտորած փայտերով ծանրաբենուած և երբ հարցրեցինք թէ ով է նրանց անտառը կոտորելու իրաւունք տուել սայլատէրերը զարմացան—ինչ իրաւ

\*.) Տե՛ս «Մուրճ» № 3.

ւունք, ինչ թուղթ, աթագան, բարադան մենք կոտորել ենք, բէզ, պատասխանեցին:

Այդ պատասխանը կատաղեցրեց ուղեկից թուրք ձիւռորիս—Սարիբէկին, որը մարակների մի քանի հարուածներով ոտնատակ եղած իրաւունքներն էր ուզում վերականգնել, բայց իմ միջամտութիւնը վերջ գրեց այդ կռուին, որը ակնյայտնի կերպով արհեստական և ձեւական մի խաղ էր. ինձ համար պարզ էր, որ անտառից անարդել օգտուել են բոլորը և գող սալլապանները և գրանց պատճող Սարիբէկը, մի խօսքով իւրաքանչիւր մարդ, ով որ կացին, եղներ և մի հատ սայլ է ունեցել:

«Քանդուած օջախի» (այսպէս էր անուանում կալուածը կարախանեանը) սահմանները պտտելուց յետոյ ինձ մնում էր ձեռք բերել այն ծանօթութիւնները, որոնցից ես փախչել չեմ կարող, որոնք սակայն ինձ կարող էին ամեն քայլափոխում պէտք գալ—եթէ մտադրութիւն ունէի մի բան անել այստեղ, այս մարդկանց հետ:

Պէտք էր այցելել գաւառական ջոշերին՝ գաւառավետին, հաշտարար գաւառարին, միջնորդին, բժշկին և այն իրանց աթոռանիստում, որը մեզնից 12—15 վերստի վրայ էր միայն. ի հարկէ ինձ որպէս հարուստ կալուածատիրոջ ներկայացուցչի, աւելի յարմար էր փառաւոր տեսք տալ իմ այցելութեանը. այս կողմ այն կողմ ընկայ յուսալով նկուղներում, ծածկերի տակ կտորի նման մի բան գտնել, որովհետն զիտէի, որ հանդուցեալ գեներալը մի քանի կառքեր է պահելիս եղել կալուածում, բայց իմ ջանքս ի զուր անցաւ, մի տեղ գտայ փակ կառքի երկու անիւներ միայն, մի այլ անկիւնում կառքի լապտերի մէկ հատը, ապա ամբարում ճանապարհորդական փառաւոր կառքի ետեւի երկու կաշուէպստ արկղեր, մի հին անգլիական թամբ և կառապանի փառաւոր մի գիշարկ՝ սիրամարդի մաշուած փետուրով զարդարուած. անցեալ փառքի այս բեկորներից գժուար էր մի կառք կազմել, ուստի ես բաւականացայ այն ձեւով, որ իմ տրամադրութեան տակ էր զրել զալու օրիցս ի վեր պ, կարախանեանը և ահա առնելով ինձ հետ երկու ձիւորներ առաւահեան ժամը 9-ին ես ճանապարհ ընկայ—Բարգուշէն:

Նկարագրեմ այն ճանապարհը որով անցնում էին Ոչ. չարժէ. բաւական է ասել, որ ժամ և կէսից աւելի ես գնում էի և չը լսեցի ոչ մի ձայն, ոչ գութանի, ոչ արօրի, ոչ երկրագործի և ոչ խաչնարածի. չորս կողմս ոչ մի մարդկային բնակչութիւն—միայն հարուստ բնութիւն, առատ ջրեր, անոշակ հո-

դեր, գաշտեր և ծիերի մի քանի երամակներ՝ անտեր, անտիրական արածելիս. ուր էր մարզը, սրանց տէրը, այս բոլորից օգտուղղը՝ չը գիտեմ. ես նրանց չը տեսայ և միայն այն ժամանակ, երբ մօտենում էի Բարգուշէնին ճանապարհին երեւացին մի քանի սայլեր, երեք-չորս ծիաւորներ և 60—70-ի չափ ոչխարներ ինձնից մի քանի վերստի վրայ արածելիս:

Բարգուշէնի տեղադրութիւնը գեղեցիկ է. զրեթէ լեռան լանջում, բուսականութեան մէջ թաղուած, որի միջից երեւում էր մզկիթի կանաչ մինարէի սուր ծայրը, մի քանի տների կտուրներ և ուրիշ ոչինչ: Ցածում վազում էր Բարգուշէն զետը, որից ջուր էին վերցնում ողջ գաւառի առուները. զրանք էին որ իրանց քըչքըչոցով, ուրախ կըլկըլցով իանզարում էին չորս կողմի մեռելային լուսութիւնը:

Վերջապէս մտանք Բարգուշէն, անցանք դրա լայն փողոցով և տալով ձիս ծիաւորին, ես ուղեկից Սարիբէկիս հետ դընացի գէպի գաւառապետի տունը:

Նա տանը չէր այլ գաւառական ոստիկանաաանը. ես ուղղուեցի ոստիկանատուն. զեռ ևս 200 քայլի վրայ ոստիկանատունը աշքի ընկաւ այն ահազին ժողովրդի բազմութեամբ, որ ժողովուած էր նրա շուրջը. մի քանի կարմիր բաշլըներով ձիաւորներ ընկած ամբոխի մէջ ծեծում, մտրակում էին սրան, նրան. դրանց մէջ տչքիս ընկան երկու սև դտակներով, մասքուր չուխաներով մարդիկ, որոնցից մէկը իր շուրջը ժողոված մի քանի գիւղացիներ ինչ որ բացատրութիւն էր տալիս, իսկ միւսը նստած պատի տակին իր ծնիների վրայ մի ինչ որ բան էր զրում. դրանք, ինչպէս Սարիբէկը բացատրեց, գիւղական աղջոկատներն էին—յայտնի մարդիկ Բարգուշէնում և շրջակայիրում...

Մտանք սրան. ձիաւորներից մէկին յանձնեցի այցեառմաս գաւառապետին տալու. մի քանի ըսպէից գուրս եկաւ թուրք ձիաւորը և ինձ ներս հրաւիրեց. ես մտայ: Դա մի մեծ սենեակ էր—մի քանի սեղաններով, որոնց վրայ թփուած էին թղթերի ծանր կտպոյներ, իսկ դրանց քամակին նստած երկու երեք հոգի—գրադիրներ պարապում էին. այստեղ էր և մեր պրիստ Հասան բէկը, որը մի ինչ որ թուղթ ձեռքին կարդում էր. տեսաւ ինձ թէ չէ ժպտադէմ մօտեղաւ, հարցրեց քէփա և ապա ցոյց տալով դիմացի դուսը ցածր ձայնով ասաց.

—Նա այնտեղ է.

Ես ներս մտայ:

Կարմիր մահուդով ծածկած, մեծ սեղանի առաջ նստած էր

գաւառապետը—Եօ-ի մօտ մի առողջ, թուխ, միջահասակ, թիկ-նաւէտ, փոքրիկ, շատ փոքրիկ բեխներով, զինուորական հագուստով թուրք աղամարդ։ Ծանր, հանգիստ տեղից շարժուեց, ձեռք տուեց ինձ և ցոյց տալով դիմացի աթոռը առաջարկեց նստել։

Ես նստեցի։

—Հասան-բէկը—մեր պրիստաւը ինձ ասել է ձեր գալըստեան մասին. շատ ուրախ եմ, որ մեր գաւառը մի ինտելիգէնտ մարդ է մանում—ասաց նա ոռուսերէն թրքական թանձր արտասանութեամբ—մանաւանդ ուրախ եմ, որ դուք գալիս եք մեր գաւառը որպէս հարուստ կալուածատէրերի ներկայացուցիչ—շատ ուրախ եմ. կրկնեց նա ժպտալով և ապա, չը թողնելով ինձ խօսել՝ շարունակեց։

—Անապատ, անապատ է մեր գաւառը. հողը հարուստ, ջուր շատ, միայն մարդ չը կայ, գործ կատարող մարդ։

—Ես լսել եմ, որ այս գաւառը հարուստ է յայտնի կալուածատէրերով, նկատեցի ես։

—Այս, բէգերով, աղաներով շատ հարուստ է, բայց ոչ մի Փխօգեալին», չեշտեց նա խօզեալին բառի վրայ։

—Իսկ ուր են խօզեալինները, հարցրեցի ես։

—Ո՞ւր, ամեն տեղ, բայց ոչ իրանց կալուածներում—թիֆլիսում, Բագու, Գանձակում, Պետերբուրգում, նոյն իսկ արտասահմանում, իսկ կալուածներում մնացել են միայն ծառաները և վերակացուները—ճիշտն ասած՝ բուն աւազակներ. բայց ինձ հարկաւոր են իրանք-տէրերը ոչ որպէս բէգեր, աղաներ, խաներ, այլ որպէս աշխատող, գործող կալուածատէրեր-խօզեալիններ։

Այս հոգացողութիւնը, այս ցաւակցական տօնը, որ գաւառը մնացել է անտէր, ինձ վրայ շատ լաւ տպաւորութիւն թողեց. —Ես նկատեցի։

—Իսրաֆիլ բէկ, դուք եւ թքէք գաւառից վախածների վրայ և զրազուեցէք նրանցով, որոնք ապրում են գաւառում՝ գիւղացիներով, նրանք աւելի կարօտ են օգնութեան, կարել-ցութեան։

Իսրաֆիլ բէկի երեսի քաղցր արտայայտութիւնը մի անգամից փոխուեց։

—Օյ, օյ, օյ—Աստուած հեռու անի, բոլորն էլ գող, աւազակ, խարդախ, ծոյլ, անպիտան, բոլորը, բոլորը... զիւզացի... այ դուք չուառվ կը ճանաչէք դրանց. գրանք հօ մարդիկ չեն, գաղաճներ են, անասուններ. ինչ անես զրանց հետ, ինչ...

մտրակ, բանտ և Սիրիո—ահա այն միջոցները, որոնցով կարելի է գրանց հետ կռուել... Սիրիո, Սիրիո...

Գաւառապետը տաքացել էր, նա տեղից բարձրացաւ և մօտեցաւ ինձ.

—Օրական հարիւր յանցանք, հասկանում էք, հարիւր յանցանք, և որ զարմանալին է մէկ մարդ կարողանում է միաժամանակ երեք յանցանք գործել, լսել էք այդպիսի բան, կարդացել եք:

Ես միջամտեցի:

—Ինձ թւում է որ յանցանքների մեծ մասը կատարւում է անդիտակցարար, չիմանալով, որ դա յանցանք է, այլ ինչպէս ինձ ամեն քայլափոխում բացատրում են «աթագան, բարադան» տեսել են, սովորել և այժմ իրանք շարունակում են նոյնը, իսկ եթէ լինէին դպրոցներ, զրքեր, լաւ աղաներ, մի խօսքով լաւ օրինակ, այն ժամանակ... նա թոյլ չը տուեց ինձ վերջացնել ասելիքս:

—Ուսումնարան, ճիշտ էք ասում. բայց թարաքամին, շրջմոլիկին, թափառական խաչնարածին ինչ ուսումնարան. նրանք տուն չունեն, տեղ չունեն, մի հաստատուն բուն չունեն. այսօր այստեղ այս սարի վրայ, վաղը միւս լեռան, գետի մօտ, անտառի մէջ և ապա նորից այստեղ, այնտեղ. ինչ ուսումնարան գրանց—նախ անհրաժեշտ է գրանց նստեցնել մի տեղ, մի հողի վրայ, կապել հողի հետ, տուն, օջախ շինել տալ, խըլել ձևոքներից ոչխարները, այն ժամանակ նրանք հաստատուն գիւղ կը կազմեն, կ'ունենան օրինաւոր վար, ցանքս, կ'ունենան մղկիթ, ուսումնարան, իսկ քանի որ մեր ժողովրդի զլսաւոր պարապմունքը կը մնայ իր խաչնարածութիւնը նա միշտ կը մնայ նոյն յիմարը, նոյն յանցաւորը, գողը, աւազակը, Օրինակ հայերը. իմ գաւառում մի 10—15 հայ գիւղեր կան. այ մարդիկ, ինչ կամեմ. տուն ունեն, պարտէզ, այզի ունեն, ելեղցի, ուսումնարան ունեն, վար, ցանք, հարստութիւն մի խօսքով ամեն ինչ, ապրում են մարդավայել, աշխատում են, քըրթինք են թափում և մարդ ուղես, չուղես յարգում է նրանց, սիրում, ուրախանում... ասենք նրանց մէջ էլ պատահում են յանցաւորներ. նու, զրանք ուրիշ տեսակի են—վաշխառուներ, բայց գրանց մատերով կարելի է համարել, իսկ մերոնց թուրքերին Աստուած անիծէ...

—Խառըանի հասարակութեանը ինչ ասենք, մեղմ ձայնով ասաց, ներս մտնելով մի քառասուն տարեկան, շիկահեր մարդ դառնալով գաւառապետին:

— Թող սպաւեն, ևս դուրս կը գամ—պատասխանեց իս-  
րաֆիլ բէկը:

— Ես բարձրացայ տեղիցս:

— Խնդրեմ այսօր երեկոյեան մեզ մօտ չնորհ բերէք, ինձ  
մօտ կը լինեն և ուրիշները:

Ես դուրս եկայ: Մեծ դահլիճում ինձ ներկայացաւ այն  
պարոնը, որ ներս մտաւ գաւառապետի մօտ.

— Սարգիս եսայեան, այստեղ սեկրետար եմ, շատ ուրախ  
եմ որ դուք եք Ա.-ի կառավարիչը:

Նա դեռ խօսքը չէր վերջացրել, երբ ներս մտաւ գաւա-  
ռապետը, խեղճ քարտուղարը հեռացաւ ինձանից:

Ես շտապեցի դուրս զալ: Ոստիկանական ծառայողները  
խոկոյն իրար զլխով դիպան. բէզը... նաչալնիկը... անցաւ շը-  
շուկը ամբոխի մէջ և բոլորը տեղերից կանգնեցին, ուղղուեցին:

Դուրս եկաւ գաւառապետը: Ես անցայ, իմ եաւեցի ես  
լսեցի սարսափիկի հայնոյանք, որին յաջորդեց իրարանցում,  
ապա շարժուեցին մտրակները և լսուեց պիտոզոմ ձայներ,  
հառաչանքներ, գաւառապետը գոռում էր «Տուր, տուր այդ  
աւազակներին... էլի... էլի...»

— Այ ջարդում է հա, բէզ, ասաց ինձ Սարիբէզը նայելով  
դէսի ոստիկանատուն:

— Ի՞նչի համար է ջարդում—հարցրեցի ես:

— Են ով զիտէ, ասաց Սարիբէզը:

Մենք մտանք դատաւորի տունը:

Նա տանն էր, տնային չորերավ: Ընդունեց, ներողութիւն  
ինձրեց, իմանալով իմ ով լինելս սկսեց.

— Լոել եմ կալուածի նոր տէրերի մասին. լաւ մարդիկ  
են, հարուստ, բարեգործ, ասում են որ մեծ ծրագիրներ ու-  
նեն նրանք, ցանկանում են զիւղատանտեսական դպրոց հիմնել  
կալուածում. ճիշտ է:

Ես անորոշ պատասխան տուեցի, քանի որ ինձ յայտնի չէր  
կալուածաէրների այդ զիտաւորութիւնը:

Մեր ականջին էին համառմ շառաչող մտրակների: և յու-  
սահատ ձայների բարձր մընչոցը.

— Ի՞նչպէս էր անցնում ձեր ժամանակ այստեղ—զիմեցի  
ես դատաւորին:

— Ի՞նչպէս, ժպտաց նա, բյեմъ, судимъ, лечимъ, мириմъ  
и играемъ, а иногда играемъ, мириմъ, лечимъ, судимъ и  
бьемъ, а въ особенности бьемъ. Լուսմ չէք—զարձաւ նա  
զիխով ցոյց տալով դէպի ոստիկանատուն:

— Ումն էք ծեծում, հարցրեցի ես:

— Բոլորին, բոլորին. դա միակ և ամենաանիշտ միջոցն է այս երկում. եթէ չես ծեծում նեղանում են, խռովում և անպատճառ այնպիսի բաներ են անում որ ծեծես:

— Իսկ ծեծողին ինչ պատիժ:

— Բայց միթէ ուրիշ ուղղիչ միջոցներ չը կան—հարցրեցի ես:

— Ինչու ուրիշ միջոցի ետեւից ընկնել քանի որ ծեծը ամենակտրական միջոցն է.

— Իսկ յանցանքները դրանով քչանում են, հետաքրքրուեցի ես:

— Ոչ, ի հարկէ, ոչ. սակայն ինչ արած որ ուրիշ, մարդավայել միջոցները ծիծաղելի են ժողովրդի համար. օրինակ տուգանք, բանտարկութիւն ևայն, առողանք կը նշանակես, նա ինքը ոչինչ չունենալով կը գնայ հարեւանից կը գողանայ և կը վճարի. կը բանտարկես—նա կ'ուրախանայ, որովհետեւ բանտը իր տնից լաւ է. բաց կը թողնես՝ նա կը գողանայ. Սիրիք կ'ուղարկես նա մի քանի ամսից կը փախչի այնտեղից, կը վերադառնայ, կը սպանի էլի մի երկուսին և կը դառնայ փախըստական աւազակ. չէ, էլի ծեծը լաւ է:

Ներս մոռաւ մի ծերունի զինուորական, սպիտակ մազերով, համակրելի զէմքով. դատաւորը ներկայացրեց.

— Հաշտարար միջնորդ Դ.-ըէկով:

— Գիւղատնես էք, այս, շատ լաւ. այ կը տեսնենք ինչ կ'անէք, լաւ այզի ունէք. միայն գինի չը կայ, եղրայր, զինի չունէք. ինչ ամօթ. գինին առնում էք, իւղը առնում, կանաչին առնում, պանիրը առնում. դա խայտառակութիւն է. տեսնենք, մի տարուց, երեւի, ձեր պատրաստած զինին կը խմնէք, ձեր շինած իւղն ու պանիրը կ'ուտենք, տեսնենք. մենք ձեզնից գեռ ևս շատ սպասելիքներ ունենք. կալուածը մեծ, տէրերը հարուստ, դուք մասնագէտ. տեսնենք ձեր չնորբն էլ. մեր բանն ուրիշ է. հող ունենք—փող չունենք, միջոց չունենք գործ կատարելու—ակամայ թողնում ենք մեր կալուածները և ծառայութեան մտնում, էլի բան է. մի կտոր հաց ենք աշխատում, տուն ընտանիք կառավարում...

Եկաւ և տեղական բժիշկը, մի երիտասարդ պարոն. ուշրախ, զուարթ, ժպտաղէմ:

Հետաքրքիր էր նրա պատմածները:

Բարգուշէնում կար մի բուժարան. միջոցները սուզ, զեղատունը աղքատ, օրական 100-ից աւելի հիւանդներ զաւառի

հեռաւոր անկիւններից թափեռմ են այդտեղ և օգնութիւն, գեղ, բկշկութիւն հայցում. դալիս են ոտով, ձիերով, սայլերով, ձիերով ամենաանտանելի ճանապարհներով, դալիս են և թափեռմ բուժարանի բաղը, այդքանին մի օրում և նոյն իսկ երկու օրում քննելու, տեսնելու ոչ մի հնար չը կայ և ահա խեղձերը, չը գտնելով ոչ մի ապաստարան, ուր գիշերէին, ստիպուած են լինում բացօղեայ անցնել—այս ու այն անկիւնում—այնպիսի պայմաններում, երբ ոչ մի հնար չը կայ զրանց օդնել—կեղտոտ, սոված, ամենաանտանելի առողջապահական զըրբութիւն, տգիտութիւն գեղերի գործածութեան վերաբերմամբ, օրինակ տալիս են այս մի զեղ քսելու, նրանք տանում են տուն և ուտում են, տալիս են խմելու՝ նրանք քսում ենք. այս կամ այն չափն ես առաջարկում, նրանք տգիտութիւնից կըրկնակի գողաներ են գործ ածում և զեղը փոխանակ օգնելու վեասում, նոյն իսկ մահացնում է—աւելացրէք զրա վրայ սարսափելի չքաւորութիւնը, նախապաշարմունքը հայն հայն և դուք կը համոզուէք թէ որքան թոյլ և անզօր են այս բուժարանները կոռելու ազգաբնակութեան հիւանդութիւնների դէմ, մի օգուտ տալու նրանց. սակայն, ցաւալի է, այդ մանաւանդ, երբ նկատում ես որ զիւղացին հաւատով է վերաբերում «դօստուրին և դարմանին»...

Երկար խօսում էր բժիշկը այս նիւթի մասին:

Արդէն ժամը 1-ն էր, ևս բարձրացայ և մնաք բարե ասելով բոլորին գուրս զնացի:

Նոյն օրը ևս վերադարձայ կալուած:

## IV

Մարտ ամիսն էր. գարունը իր ողջ արդ ու զարդով, ողջ քնքաւթեամբ ու հրապուրիչ չքեղութեամբ հրապարակ էր գուրս ելել, ծառերը սկսել էին ծաղկել և ամենից շուտ նշենին էր իր բայց-վարդագոյն ծաղկավնջերով բացուել, ուռճացել. Ուր նայում ես կանաչ, ուր նայում ես թարմութիւն, չքեղութիւն նորատի, նորաբողբաջ կեանք իր ապրելու ոյժով, եռանդով, պահանջով, կենսատու հողը ևս սկսել էր ևս զալ ուռչել. գարնան ջերմ արեգակի տակ, գալորշին սպիտակ, հաղիւ նկատելի շղարչինման, գուրս զալով հողի ծակոտիներից ու ճեղքերից հանդարտ օրօրուելով բարձրանում էր աջ ու ձախ մեղմ ուրուելով, խաղաղ հեռանում սև հողից և գնում նստում էր ծառերի, տունկերի, ծաղիկների վրայ:

Բայց որքան եռուն էր զարունը, նոյնքան մեռած էին մարդիկ. դուրս ես գալիս գաշտ, այն ընդարձակ դաշտը, ուր հողի իւրաքանչիւր մի կտոր քեզ դէպի ինքն է կանչում և կարծես, ասում «արի ճեղքիր ինձ մի փոքր, շատ փոքր ճեղքիր, պահ տուր ինձ մի հունտ, մի հատիկ հունտ և ես մի քանի ամսից քեզ հարիւրապատիկը կը տամ, բայց մարդը անտարբերութեամբ անցնում է նրա մօտով, կոխում, արորում է ոտով նրան և հեռանում զնում է. զիտէք ուր. նա զնում է դողանալու հարեւանի ուր, գառը, հաւը, ձին, մի հատիկ հորդը...

Ամբողջ դաշտի վրայ չորս հինգ տեղ միայն երեւում էին մարդիկ իրանց եղներով: գոմէչներով, արօրով և այնպիսի մի ձանձրոյթով էին վարում, կարծես, այդ հողը, այդ եղները, այդ արօրը չէ որ նրան, նրա ընտանիքը պահող կերակրողը... Գիւղացիների՝ մեծ մասը այժմ զբաղուած էր առուներ մաքրերելով, խորացներով. խոտհարքներ ջրելու ժամանակն եկել էր, մի երկու ամսից մօտենում էր քոչի ժամանակը, իսկ մինչ այդ պէտք էր արտերը ջրել, խոտը հնձել, ժողովել, արտերը քաղել և չուել դէպի լեռները, սառը աղբիւրները: Ահա թէ ինչու դութանաւորների տեղ բահաւորներն էին երեւում, ուները քշտած, բոկսան, ձեռքերը քշտած բորոքը շտապում են դէպի առուները. ջուրը արդէն շատանում է. պէտք էր օգտուել օր առաջ:

Ութ, ինը մշակներ ձեռք ու ոտեհերը քշտած մի կողմից մաքրում, միւս կողմից ջուր էին թողնում մեր ընդարձակ խոտատեղի վրայ, երբ ինձ մօտեցաւ հարեւան կալուածատէր իսկ մայիլ բէկը,

—Ես ձեզ մօտ էի գալիս, ասայ նա բանելով ձեռքս:  
—Ես ձեզ սպասում էի, պատասխանեցի ևս  
—Ինչ անենք, ասացէք, զարուն է, աշխատանքի ժամանակ, խորհուրդ տուէք, ինչ սկսենք:  
—Եղներ ունէք,  
—Ութ դոյզ,  
—Գութան:

—Մի երկաթէ դութան ունեմ, չորս տարի առաջ գնած, բանի պէտք կը գայ:  
—Եթէ կոտրած տեղ չունի:

—Ոչ, անգործութիւնից ժամդոտուած է միայն, ինչպէս բերել եմ այնպէս էլ մնացել է:  
—Եթէ այդպէս է, իսմայիլ բէկ, վաղը իսկ դուրս քաշիր

զութանը, վարձիր մի քանի մշակներ և սկսիր տանդ մօտ մի ընդարձակ, խամ հողում վարբ:

—Բայց ով կը վարի, իմ ծառաներիցս գութան բանեցնող չի լինիր:

—Այսօր իսկ մարդ ուղարկիր մեր հարեւան Բաջոնց հայաբնակ գիւղը և այստեղից մի լաւ սաշպար բերել տուր. Նրանք գութան բանեցնելում վարպետ են:

Իսմայիլ բէկը տատանւում էր:

—Իսկ ի՞նչ ենք ցանելու:

—Բամբակ:

—Լաւ, ի՞նչ պայմաններով տամ հայերին վարելու:

—Եղները քեզնից, հողը քոնը, սերմը քոնը, ջուրը քոնը, գութանը քոնը:

—Իսկ նրանց, նրանց ի՞նչ մնայ:

—Ամենազլիսաւորը՝ աշխատանք. նրանք կը վարեն, կը ցանեն, կը ջրեն, քաղցան կ'անեն, ապա, երբ բամբակը հասնի, քեզ հետ կիսովի կը ժողովեն և դու նրանց կը տաս բամբակի կէսը:

Իսմայիլ բէկի բերանը բաց մնայ:

—Կէսը:

—Այս կէսը. չէ որ դու մինչև օրս ունէիր և հող, և ջուր, և գութան և եղներ, բայց գիւղացիներից սաշցած բահրից բացի ոչինչ չունէիր, որովհետեւ այդ բոլորի հետ չը կար ամենազլիսաւորը—աշխատանքը. ահա այդ աշխատանքը կը դնի հայ գիւղացին և դու շահուած կը լինես:

Իսմայիլ բէկը զլուխը շարժեց:

—Դուք շատ երես եք տալիս գիւղացիներին. այդպէս զնահստելով նրա աշխատանքը, դուք նրանց մեր գլխի տէր կը շինէք և դա կը դառնայ սովորաւթիւն, լաւ չի լինի, եթէ մենք փողով անենք այդ բոլորը, հարցրեց նա լրջօրէն:

—Փարձեցէք, բայց դա ձեզ կրկնակի թանգ կը նստի:

—Չէ, էժան կը նստեցնեմ. հէնց այսօր հայերին բերել կը տամ և կը խօսեմ հետեւը,

Նա ձեռքը մեկնեց ինձ, մնաս բարե ասեց և նախ քան հեռանալը ինդրեց:

—Վաղը դուք էլ եկէք, տեսէք գութանը, ցոյց տուէք ի՞նչ հարկաւոր է. ես շատ չորհակալ կը լինեմ:

Ես յայտնեցի իմ պատրաստակամութիւնը:

Նա գոն սրտով հեռացաւ ինձնից:

Յաջորդ օրը առաւօտեան ես մի տոմս ստացայ Իսմայիլ-

բէկից. զրում էր «Եկէք և ինքներդ պայմանաւորուեցէք». ուղարկել էր մի լաւ ձի և երկու ձիաւորներ—ուղեկցելու ինձ:

Ես իսկոյն գնացի. մի ժամից ես իսմայիլ բէկի խղճուկ ընսկարանումն էի, մեծ սենեակի յատակը, պատերը ծածկուած էին տեղական խալիներով, կապերտներով, փալաներով. մի սեղան անկիւնում. մեծ պատին չորս-հինգ զանազան սիստէմների հրացաններ, պատրօնտաշներ, սուրեր, խէնջարներ. ինքը նստած տախտի վրայ, առաջին վեց եօթ թուրքեր, խօսում էր. նկատելով ինձ իսկոյն բարձրացաւ տեղից.

—Գիտէք ինչ ուզեց անպիտան հայը իր աշխատանքի համար. երեք հարիւր սուրբի, որ մի ամիս վարի գութանով և անի այն բոլորը ինչ որ դուք երէկ ասացիք ինձ, ես գութեցի լսելով այդ, քիչ էր մնում ծեծէի անպիտանին, երեք հարիւր սուրբի... բարիացած պատմում էր ինձ իսմայիլ բէկը:

—Իսկ կիսովի համաձայն է:

—Ես այնքան բարիացայ, որ իսկի չը հարցրեցի էլ. դուք խօսէք ինորենմ, ես անկարող եմ այդ լրերի հետ հանգիստ խօսել. կանչիր այստեղ հային—զարձաւ նա թուրք ծառաներից մէկին:

Հայը եկաւ. դա մի երեսուն հինգ տարեկան, թուխ գէմքով, բաւական մաքուր հազնուած հայ զիւղացի էր—Աբրահամ անունով:

—Աբրահամ, բամբակ վարել ես իսկի:

—Չէ, բէդ, բամբակ մեզնում չեն վարում:

—Իսմայիլ բէզը ուզում է բամբակ ցանել իր հողերում:

—Լաւ, ինչ կը լինի, թող ցանի: Պատասխանեց նա անտարբեր եղանակով:

—Այսինքն դու պէտք է նրա համար ցանես, ես քեզ կը սովորեցնեմ թէ ինչպէս անել, կարող ես:

—Բէդ, էշ հօ չեմ, որ սովորեցնես կ'անեմ էլի:

—Մի ամիս մի գութանով ինչքան տեղ կը վարես:

—Բէդ, գութանը, եղները գիտի, լաւ եղներով մի ամսում 20 չուալ տեղ կը վարեմ:

—Կիսովի կը վարես—հարցրեցի ես և ապա բացատրեցի բամբակի մշակութեան եղանակը. նա լուս ու մունջ լսում էր. տուեց մի քանի հարցեր ջրելու, քաղնանի, ցանելու, եկամաի, բամբակի զնի մասին և համաձայնուեց:

—Բէդ, զարձաւ ինձ Աբրահամը, բամբակի գործը մեզ համար նոր է, թող իսմայիլ բէզը ինձ խօսք տայ, որ եթէ քո

Տալիս, 1902.

ասածի նման անելուց յետոյ, եկամուռ չը լինի՝ նա ինձ տաս չուալ ցորեն տայ, որ ես էլ զրկուած չը լինեմ, որովհետեւ այդ-տեղ աշխատելու ենք ես, իմ երկու եղբայրները, երեք տղաներս—վեց հոգի:

իսմայիլ բէզը համաձայնուեց միայն այն ժամանակ, երբ ես նրան ապահովեցրեցի զործի աջողութիւնը:

—Բէզ, խնդրեմ ասես որ գութանը դուրս բերեն, եղները լծենք մի փորձ անելու, դարձաւ նա իսմայիլ բէզին:

—Հայ, ինչ ես շտապում, էզուց արի:

—Զէ, բէզ, ժամանակը թանգ է, քանի որ այստեղ եմ սկսենք, լաւ կը լինի:

իսմայիլ բէզը հրամայեց դուրս բերել գութանը և տալ եղները:

Մենք նախաճաշեցինք, ապա դուրս եկանք նրա գեղեցիկ նժոյգները նայելու և երբ մտանք փոքրիկ անտառը աղմուկի ձայն լսեցինք, ուղղուեցինք դէպի այն կողմը. մի խումբ թուրքերի մէջ տեսանք Աբրահամին, որը արդէն գործի էր անցել չորս զոյգ եղներ լծած երկաթէ գութանին աշխատում էր. մօտեցանք:

—Այ անտէրի եղներ, տեղներից չեն շարժւում. իսկի գութան վարել են որ իմանան աշխատելն ինչ բան է. դրանցով բան չի լինի. ես մի երկու օր կը բերեմ իմ մի ջուխտ եղները. նրանց կը լծեմ առաջին և նրանք այս թամբալներին աշխատել կը սովորեցնեն—դարձաւ ինձ Աբրահամը:

Թուրքերը շրջապատած նրան աւելի հայ-հոյ էին անում քան օգնում.

—Բէզ, դարձաւ Աբրահամը իսմայիլ բէզին, եղներդ քո ծառաների նման ծոյլ են, նրանց որ տեսնում են լուծը զգից դէն են զցում. խնդրեմ ասես որ, երբ մենք վար անելու կը լինենք, ծառաներիցդ ոչ ոք չը մօտենայ մեզ:

իսմայիլ բէզը բարկացաւ, բայց չարտայայտեց խօսքերով:

—Լաւ, հպարտ հայ, կասեմ—զու քո գործն արա. ապա դառնալով ինձ.

—Տեսնում էր ինչպէս ծաղրում են մեզ. տեղն է. ճիշտ է ասում. սրանցից ոչ մէկն էլ գութանի մաճ բռնելու ձեզ չը գիտեն, իսկ այժմ գութանն է, որ հայ է տալիս, ժամանակ-ները փոխուել են:

Դա գութանի յաղթանակն էր. ես մի առանձին ներքին բաւականութեամբ էլ լսում այս խոստովանքը, մանաւանդ, երբ այդ անում էր իսմայիլ բէզի նման մի կալուածատէր:

Մենք հեռացանք Աբրահամից և մի կէս ժամից ձի նստելով գնացի այցելութեան հարեան կալուածատէր Աղալար-բէզի մօտ:

—Խնդրեմ ձեր խորհուրդներով օգնէք մեր գործին—դիմեցին զնաս բարեին իսմայիլ բէզը:

Ա. ԱԹԱՆԱՍԵԱՆ